



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հուլիսի 2020 թվականի
Թիվ 304-Ա

**«ՋԵՐՄ ՖԱՐՄ» ԵՎ «ՀԱՅՐ ԵՎ ՈՐՂԻ ԵՐԵՄՅԱՆՆԵՐ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի հուլիսի 31-ի դռնբաց նիստում քննարկեց «Ջերմ Ֆարմ» (այսուհետ՝ «Ջերմ Ֆարմ» ընկերություն) և «Հայր և որդի Երեմյաններ» (այսուհետ՝ «Հայր և որդի Երեմյաններ» ընկերություն) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (այսուհետ նաև՝ Ընկերություններ) համակենտրոնացման վերաբերյալ հարցը:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Ընկերությունները 2020 թվականի հուլիսի 7-ին դիմում են (այսուհետ՝ Դիմում) ներկայացրել Հանձնաժողով՝ հայտնելով, որ «Հայր և որդի Երեմյաններ» ընկերությունը ցանկանում է ձեռք բերել «Ջերմ Ֆարմ» ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոս բաժնեմասը: Համակենտրոնացման նպատակն է Ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացումը, ծառայությունների որակի բարելավումը:

Դիմումի հիման վրա Հանձնաժողովի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ: Դիմումին կից ներկայացվել են Ընկերությունների կողմից կազմված հայտարարագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Համակենտրոնացման մասնակիցները.

Ներկայացված տեղեկությունների համաձայն «Հայր և որդի Երեմյաններ» ընկերությունը գրանցվել է 2006 թվականին, կանոնադրական կապիտալի 100 տոկոս բաժնեմասը պատկանում է ֆիզիկական անձ Դավիթ Էդիկի Երեմյանին, վերջինս նաև ընկերության գլխավոր տնօրենն է: «Հայր և որդի Երեմյաններ» ընկերությունն իրականացնում է հանրային սննդի կազմակերպում,

«Ջերմ Ֆարմ» ընկերությունը ստեղծվել է 2020 թվականի հունիսի 11-ին՝ «Ջերմուկ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերությունից (այսուհետ՝ «Ջերմուկ Գրուպ» ընկերություն) առանձնացման ճանապարհով, նախատեսում է գործունեություն իրականացնել գյուղատնտեսության ոլորտում, զբաղվել բուսաբուծությամբ և անասնապահությամբ: «Ջերմ Ֆարմ» ընկերության մասնակիցներն են ֆիզիկական անձ Վահագն Աշոտի Արսենյանը և «Ջերմուկ Գրուպ» ընկերությունը՝ համապատասխանաբար 94 տոկոս և 6 տոկոս բաժնեմասով:

«Հայր և որդի Երեմյաններ» ընկերության և միակ մասնակից Դավիթ Էդիկի Երեմյանի այլ ընկերություններում ունեցած մասնակցությունները.

«Հայր և որդի Երեմյաններ» ընկերությանն է պատկանում նաև «Էկո Ֆարմ» (այսուհետ՝ «Էկո Ֆարմ» ընկերություն, ընկերությունն իրականացնում է խոշոր եղջերավոր անասունների բուծում, կաթնամթերքի արտադրություն և իրացում) և «Գազմայ 1» (ընկերությունն իրականացնում է համակցված կերերի արտադրություն) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների 100 տոկոս բաժնեմասը:

Հարկ է նշել, որ Ֆիզիկական անձ Դավիթ Երեմյանին է պատկանում նաև «Երեմյան Փրոջեքթս», «Դեմգո», «Դերմիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների 100 տոկոս բաժնեմասը (իրականացնում են հանրային սննդի կազմակերպում) և «Երեմյան Փրոջեքթս Սեյուրիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 100 տոկոս բաժնեմասը (իրականացնում է պահնորդական գործունեություն), Դավիթ Երեմյանը 2018 թվականի փետրվարի 15-ից «Էդ Յան» ընկերության տնօրենն է (ընկերությունն իրականացնում է հանրային սննդի կազմակերպում, 100 տոկոս բաժնեմասը պատկանում է փոխկապակցված անձ Աստղիկ Աշոտի Տիգրանյանին):

«Jeremyan Products» ապրանքային նշանի ներքո արտադրվող և իրացվող կաթնամթերքի մասին.

«Jeremyan Products» ապրանքային նշանը, որի ներքո արտադրվում է կաթնամթերք, գրանցված է: Կաթնամթերքի արտադրությունն իրականացնում է «Էկո Ֆարմ» ընկերությունը՝ «Հայր և որդի Երեմյաններ» ընկերության պատվերով: -----

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի կողմից կաթնամթերքի շրջանառության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ 2019 թվականին «Էկո Ֆարմ» ընկերության ունեցած տեսակարար կշիռը կաթնամթերքի արտադրության ու իրացման մեջ կազմում է ընդհանուր ծավալի -----:

Վարչական վարույթի շրջանակներում 2020 թվականի հուլիսի 28-ին տեղի է ունեցել Հանձնաժողովի նիստ, որի ընթացքում քննարկվել է Դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթում առկա փաստական հանգամանքների մասին հարցը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Ընկերությունների ներկայացուցիչները:

Հանձնաժողովը գործի բազմակողմանի լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում ամրագրում է հետևյալը.

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում տնտեսվարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կամ ձեռք բերողին արդեն պատկանող փայաբաժնի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոսը կամ ավելին:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը, ենթակա է հայտարարագրման, եթե՝ համակենտրոնացման մասնակիցների ակտիվների կամ հասույթի ընդհանուր արժեքը (չափը) կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների կամ հասույթի արժեքը (չափը) դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակցի (մասնակիցների) ակտիվների և հասույթ(ներ)ի արժեքը (չափը) սահմանելու, տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայտարարագրման կարգի և հայտարարագրի ձևի մասին» թիվ 478-Ն որոշմամբ սահմանված ակտիվների կամ հասույթ(ներ)ի արժեքը (չափը):

Վերոնշյալի հաշվառմամբ հարկ է փաստել, որ «Հայր և որդի Երեմյաններ» ընկերության կողմից «Ջերմ Ֆարմ» ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոս բաժնեմասի ձեռքբերման գործարքն Օրենքի իմաստով հանդիսանում է խառը համակենտրոնացում: «Հայր և որդի Երեմյաններ» ընկերության 2019 թվականի ակտիվների արժեքը և հասույթի չափը գերազանցում է Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 478-Ն որոշմամբ սահմանված ակտիվների արժեքը, ուստի կարելի է եզրակացնել, որ նշված համակենտրոնացումը ենթակա է հայտարարագրման:

Վարչական վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրության, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ նշված համակենտրոնացումը մրցակցությունը չի խոչընդոտում և ենթակա է թույլատրման:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովվելու,

ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված օրենքով կարող են ստեղծվել ինքնավար մարմիններ, իսկ 11-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովն ինքնավար մարմին է, որը նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրականացնում է տնտեսական մրցակցության պաշտպանությունը:

Վերը նշված իրավանորմերի համադրության և վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված Հանձնաժողովի որոշումը բխում է հանրային շահի ապահովման անհրաժեշտությունից:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով Օրենքի 8-րդ, 9-րդ հոդվածները, 19-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետը, ինչպես նաև Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 478-Ն որոշումը, Հանձնաժողովը՝

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Թույլատրել «Ջերմ Ֆարմ» և «Հայր և որդի Երեմյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համակենտրոնացումը՝ «Հայր և որդի Երեմյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Ջերմ Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 100 տոկոս փայաբաժնի ձեռքբերման միջոցով:

2. Սույն որոշումը համապատասխանաբար ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Ջերմ Ֆարմ» և «Հայր և որդի Երեմյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը:

ՆԱԽԱԳԱՀ

ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ